ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

# ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ

Ուրախ, Զուարթ, Քրքջալիր Օբէրէթ

…արժանացաւ անխտիր այնքան խանդավառ
ընդունելութեան

56

1924

«ՊԱՅՔԱՐ»Ի ՏՊԱՐԱՆ
Պօսթըն, Մէս.

«ՍՈԽԱԿ»Ի ՄԱՍՆԱՒՈՐ ԵՐԳԶՈՒՀԻ



ՏԻԿ. Մ. ՍՈՒՐԱԲԵԱՆ

Չար Մարդիկը Երգ Չունին — ՇԻԼԼԷՐ

Երրորդ Հրատարակութիւն

Ամէն իրաւունք վերապահուած է

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

894.362-293

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

# ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ

Ուրախ, Զուարթ, Քրքջալից Օբէրէթ

Որ արժանացաւ անխտիր այնքան խանդավառ Ընդունելութեան

1924

«ՊԱՅՔԱՐ»Ի ՏՊԱՐԱՆ
Պօսթըն, Մէս.

## «ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ»

—o—

«Արշին Մալ Ալան» անուն մը որ իր հետ ամերիկահայութեան մէջ մտցուց հետաքրքրութիւն եւ ծիծաղ: Խաղ մը որ տեսնողը խնդաց, դիտողը սիրեց եւ չտեսնողը զղջաց: Խաղ մը որ ամբողջ հանդիսականները իր հետ կ'ապրեցնէ եւ նոյն իսկ շատերու մէջ կ'առեղծէ բուռն փափաք մը բեմ ցատկելու եւ խաղի մէջ մտնելու...:

Եւ անշուշտ այս է պատճառը որ «Արշին Մալ Ալան» ուր որ երթայ մէկէ աւելի անգամներ կը խաղացուի: Ամերիկայի պէս տեղ մը ուր մէկ խաղը հազիւ 5 տարին անգամ մը կը կրկնուի, «Արշին Մալ Ալան» կրկնուեցաւ մէկ ամսուայ մէջ երկու անգամ միեւնոյն քաղաքներու մէջ:

«Արշին Մալ Ալան» միայն Ամերիկայի մէջ չէ որ գտած է այդ յաջողութիւնը. նոյն խաղը՝

Հայաստանի մէջ խաղացուած է ութ տարուայ ընթացքին 965 անգամ.
Վրաստանի մէջ՝ 7 տարուայ մէջ 879 անգամ.
Ռուսաստանի մէջ՝ 5 տարուայ մէջ 468 անգամ.
Ատրպէյճանի մէջ՝ 7 տարուայ մէջ 564 անգամ.
Տաճկաստանի մէջ՝ 2 տարուայ մէջ 128 անգամ.
Իզմիրի մէջ՝ 4 ամսուայ մէջ 11 անգամ.
Իսկ Ամերիկայի մէջ՝ 8 կէս ամսուայ ընթացքին 48 անգամ:

Եւ շատերու կողմէ եղած պահանջներուն գոհացում տալու համար հրատարակութեանց կուտանք այս գրքոյկը, որպէսզի այնքան ժողովրդականացած այս օբէրէթէն ամէն ոք ունենայ օրինակ մը:



Ս․ ՎԱՐԴԵԱՆ — Ասկեարի դերին մէջ



ՊՐ. Ս. ՍՈՒՐԱԲԵԱՆ

Ղեկավար Հայ Տրամ-Օբէրէթ խումբի

## Ա․ ԱՐԱՐ

### 1 A

Ասկեար․— *Ա՜խ, միթէ կը ճարուի աշխարհում*
*Ինձ նման դարդոտ մի մարդ,*
*Հալ չը մնաց ինձանում*
*Մնալով այսպէս մենակ։*

*Ա՜խ, միթէ շատ պէտք է տեւի*
*Այս իմ չարչարանքը․*
*Ծնուեցի ես երեւի, որ այսպէս,*
*Մենակ անցնի իմ կեանքը։*

*Դարդերիս արա դարման, Խալա, Խալա,*
*Այրւում եմ ինձ ճար արա, Խալա, Խալա,*
*Մինչեւ ե՞րբ այսպէս պիտի տանջուիմ*
*Ա՜խ, այս տանջանքից ազատիր։*

Խալա․— *Զաղըրը գցեմ գլխիս*
*Խալան քեզ մատաղ Ասկեար,*
*Գնամ քեզ աղջիկ ճարեմ*
*Խալան քեզ մատաղ Ասկեար։*

Ասկեար․— *Քո ճարածը ինչ կանեմ*
*Այդպէս չի լինի Խալա,*
*Աղջիկը ինձի է պէտք*
*Արդե՞օք սրտիս դուր կուգայ։*

Խալա․— *Մեր օրէնքին դէմ բան է*
*Քեզ աղջիկ չեն տեսցնի,*
*Թէ որ ինձ ականջ անես*
*Այդպէս բաներ չես անի։*



ՊՐ. Ս. ՔՈՒՇՆԱՐԵԱՆ

Երաժշտական Րէժիսէօր Հայ Տրամ–Օբէրէթ **խմբի**

Ասկեար.— Ձր տեսած ես չեմ տանի
Այդ լաւ իմանաս Խալա,
Թէ որ չեմ ամուսնանա
Ինչ ուզում ես ինձ ասա:

Վելի.— Դու, ի՛մ սրտից խօսեցիր
Շատ լաւ ասացիր աղա՛,
Դու տեղդ ծանր նստիր
Ձուր մի չարչարուիր Խալա:

Սուլէման.— Այդ ի՞նչ է քո դարդը
Այս ինչ տխրութիւն է սա
Ինչ է քո տանջանքը
Ասա, տեսնեմ ինձ ասա:

Մի ամաչիր, պատմիր,
Ասկեար, քո դարդը ինձի,
Ի՞նչ ես դու մտածում
Նման այդպէս գերիի:

Այս աշխարհում միթէ
Քո դարդերին ճար չկա՞յ
Վերջ տուր մտածմունքիդ
Պատմիր տեսնեմ թէ ի՞նչ կայ:

Միթէ դու չես լսել
Որ այսպիսի առած կայ,
Աշխարհիս երեսին
Անկարելի բան չկայ:

Ուրախացիր դու Ասկեար ջան
Սրտով եմ, ես, քեզ բարեկամ,
Խորհուրդներիս դու հետեւիր
Եւ քեզ համար աղջիկ գտիր:

Ասկեար․— *Արչին մալչին ես կը լինիմ*
*Եւ իմ աչքով աղջիկ կընտրեմ*
*Իսկ քո խորհուրդների համար*
*Մի մատանի քեզ կընծայեմ ։*

Սուլէյման․— *Տեսար որ ես խելացի եմ*
*Եւ ինքս էլ շատ բարի եմ,*
*Խոստացած ընծա դոր անես*
*Գործերիդ էլ միջնորդ կը լինեմ ։*

Խալա․— *Ես էլ սիրուն կը դարդարուեմ*
*Քեզ համար աղջիկ կը գտնեմ,*
*Ջահան Խալան ցաւդ տանի*
*Հարսանիքիդ լաւ կը պարեմ ։*

Ասկեար, Խալա, Սուլէյման․— (Միասին)
*Վայի դու ի՞նչ ես մտածում*
*Դարդըդ ի՞նչ է միտք ես անում․*
*Քեզ էլ մի աղջիկ կը ճարենք*
*Ի զուր տեղ բա՛խ ես քաշում ։*

Վէլի․— *Ա՛խ, աղա ջան, բարի կը լինէք,*
*Թէ ասածներդ կատարէք,*
*Գիշեր ցերեկ մտածում եմ*
*Կնիկ չունիմ, կնիկ արէք ։*

## Բ. ԱՐԱՐ

### 1 B

Գիւլչօհրա.— Ա՜խ, եարար, վերջ կը լինի
Մեր այս ցաւ ու հոգ սէրին,
Ա՜խ, Աստուած դու խղճայ մեզի
Եւ վերջ տուր մեր վշտերին:
Ինչո՞ւ համար պէտք է մենք
Այսպէս խաւարում տանջուենք,
Ա՜խ, Աստուած, դու խղճայ մեզի
Եւ վերջ տուր մեր վշտերին:

### 2 A

Ասկեար.— Արշին մալ ալան,
Արշին մալ ալան,
Արշին մալ ալան,
Բասմա, Թաֆթայ, փարչա, հէ՜յ...

Աղջիկներ.— Արշին մալ ալան,
Արշին մալ ալան,
Շուտ արա, շուտ ե՛կ այստեղ:
Արշին մալչի մալ ցոյց տուր,
Բողչադ բաց մէկ-մէկ ցոյց տուր,
Ցոյց տուր, ցոյց տուր ինչ որ կայ,
Տեսնենք մեզ յարմար ի՞նչ կայ...

. . . . . . . . . . . . . . .

Ինչ գեղեցիկ կտոր է,
Ծաղիկն էլ յարմար է.
Նորահարսի համար լաւն է, լաւն է,
Ա՜խ, երանի ով հարսանեաց շոր կարի,
Ա՜խ, երանի ով սիրած եարին տեսնի:



Տիկ. Մ. ՍՈՒՐԱԲԵԱՆ
Անխաի Դերին Մէջ

3 A

Ասկեար․— *Սուլէյմանի խորհուրդով,*
*Արշին մալչի ես դարձայ*
*Թէեւ ես շատ տանջուեցայ*
*Բայց վերջապէս քեզ գտայ։*
*Այնպէս սիրեցի, սրտով սիրեցի*
*Անկեղծ սիրեցի ես քեզ*
*Որ չեմ ապրիլ առանց քեզ։*
. . . . . . . . . . . .

Գիւլչօհրա․— *Ոչ ոքի չէի տեսել*
*Դարդերս չէի պատմել,*
*Սէրը ի՛նչ է չգիտէի*
*Քեզ տեսայ սիրեցի*
*Այնպէս սիրեցի, սրտով սիրեցի,*
*Անկեղծ սիրեցի, ես քեզ,*
*Որ չեմ ապրիր առանց քեզ։*
. . . . . . . . . . . . . . .

Երկուսովի․— *Ա՛խ, մեր բախտը մեզ օգնեց*
*Ես ինձ Թշուառ կարծեցի․*
*Բայց կեանքը մեզ ողջունեց*
*Քեզի տեսայ սիրեցի։*
*Այնպէս սիրեցի, սրտով սիրեցի,*
*Անկեղծ սիրեցի, ես քեզ,*
*Որ չեմ ապրիր առանց քեզ…*
. . . . . . . . . . . . . . .

3 B

Գիւլչօհրա․— *Երդից պատահեց Աստուած իմ,*
*Արշին մալ ալան…*
*Սիրտս կրակով լցրաւ իմ*
*Այրւում եմ…*
*Ինք՝ լաւ, խօսքերը՝ քաղցր,*

Արչին մալ ալան…
Սիրեցի ամենից բարձր
Այրւում եմ…

. . . . . . . . . . . . . . .

Ասիա.— Ինչ վատ ես տրամադրւած
Գիւլչօհրա, մեղ սաս,
Սիրտդ ինչո՞ւ է կոտրած
Գիւլչօհրա, մեղ սաւ,
Ինչպէս մի խելագարւած,
Գիւլչօհրա, մեղ սաս,
Շուտ սաս, Գիւլչօհրա:
Օրիորդին այդ չի սազի
Տխրի ու մտածի,
Այդ ի՞նչ է քեզ պատահել
Գիւլչօհրա՛, մեղ սաս՛,
Շուտ սաս, Գիւլչօհրա՛:

. . . . . . . . . . . . . . .

2 B

Ասկեար.— Վերջապէս գտայ ես իմ ուզածը այ աման
Ամբողջ քաղաքը հրջելուց յետոյ
Շատ էլ ինձ յարմար է իմ սիրած եարը այ աման
Եւ ինքն էլ ինձ սիրեց շատ սրտով:
Ե՛կ, ե՛կ, սիրունիկս,
Քեզ տեսնելու համար մայլչի եմ դառել

. . . . . . . . . . . . . . .

Սրանից լաւը ես չէի գտնի այ աման,
Եթէ ման գայի, ես հարիւր տարի.
Մեզի նման իրար շատ յարմար զոյգ այ աման,
Դժւար թէ մէկ ուրիշը գտնի:
Ե՛կ, ե՛կ, սիրունիկս,
Ե՛կ, ե՛կ, անուշիկս,
Քեզ տեսնելու համար մայլչի եմ դառել:

. . . . . . . . . . . . . . .



ՏԻԿ. Մ. ՍՈՒՐԱԲԵԱՆ

4 B

Սուլթան-Բէկ.— Մէկի ձի առա, աշխարհ ընկայ
Եկ առնեմ, դիլ բիլմէզ,
Վերջը եկայ քեզի գտայ
Մարալս, դիլ բիլմէզ:
Մօտեցիր խնդրեմ...
Աչերդ տեսնեմ...
Եկ առնեմ, դիլ բիլմէզ:
. . . . . . . . . . . . . . .
Տուն կը շինեմ քարի վրայ,
Մարալս, դիլ բիլմէզ,
Մէջը ոսկի, զմրուխտ, ալմաս
Եկ առնեմ, դիլ բիլմէզ,
Մօտեցի՛ր, խնդրեմ,
Աչերդ տեսնեմ,
Եկ առնեմ, մարալս:
. . . . . . . . . . . . . . .
Ե՛ս այրի, դո՛ւ այրի
Դու ե՛կ ինձ առի, դիլ բիլմէզ,
Ինչ որ ասեմ ինձ յօժարիր
Մարալս, դիլ բիլմէզ:
Մօտեցիր, խնդրեմ,
Աչերդ տեսնեմ,
Ե՛կ առնեմ, դիլ բիլմէզ...:
. . . . . . . . . . . . . . .
Ինչ վատ եղաւ այս իմ հալը
Ե՛կ առնեմ, դիլ բիլմէզ,
Ձեռքիցս ընկաւ իմ եարըս.
Ե՛կ, առնեմ մարալս:
Նորից ե՛կ, խնդրեմ,
Աչերդ տեսնեմ,
Ե՛կ, առնեմ, դիլ բիլմէզ...:

## Գ. ԱՐԱՐ

### 4 A

Գիւլչօհրա.— *Ա՜խ, Աստուած իմ, այս ինչ դարդ է,*
*Սիրտս ու հոգիս նա կը մաշէ:*

. . . . . . . . . . . . . . .

*Սիրածս ինչպէ՜ս, մի կարմիր վարդ էր,*
*Ջահիլ ջիւանիս, նա՜ կը տանջէ:*

. . . . . . . . . . . . . . .

*Ա՜խ, արշին մալչի՜, դու իմ գեղեցիկ,*
*Դու ես, դու ես, դո՜ւ իմ սիրած եարը:*

. . . . . . . . . . . . . . .

### 5 A

Սուլէյման.— *Բէգի աղջիկը երեւի սա է,*
*Մեր Ասկեարը շատ է հաւան կացել.*
*Ձեզ եմ ասում, շատ է հաւան կացել:*

. . . . . . . . . . . . . . .

*Ո՞վ կ'իմանար որ Սուլթան-Բէկը*
*Այսպէս նաշխուն աղջիկ է ունեցել,*
*Ձեզ եմ ասում, աղջիկ է ունեցել:*

. . . . . . . . . . . . . . .

*Ափսո՜ս, ա՜խ ափսոս ես չէի տեսել,*
*Որ այսպիսի գեղեցիկն է եղել.*
*Ձեզ եմ ասում, գեղեցիկն է եղել:*

### 5 B

Ասեա.— *Ա՜խ, այս սիրունիկ տղան որ եկաւ,*
*Չգիտեմ ինչո՞ւ սիրտս տխրեցաւ*
*Նա՜, ինձ քաշում է չգիտեմ թէ ո՜ւր,*
*Ա՜խ, ե՛ս, ջերմ սիրով սիրեցի նրան:*

. . . . . . . . . . . . . . .

A II 22594



ՊՐ. Վ. ՍԱԳԱԵԱՆ, Վէլիի դերին մէջ

*Աչեր սեւորակ, աչեր գեղեցիկ,*
*Սքանչելի աչեր, հրաշալի աչեր.*
*Երբոր ձեզ տեսայ, խելագարուեցայ*
*Կարծում էիր թէ երազումն եմ ես:*

6 A

Թէլլի.— *Ա՜խ, ե՛կ, իմ սիրած քեզ եմ սպասում,*
*Գիշեր, ցերեկ, ես մտածում.*
*Աղի արտասուք եմ թափում,*
*Այրւում, այրւում եմ բայց քեզ չեմ տեսնում:*

. . . . . . . . . . . . . . . . .

*Ա՜խ, ի՞նչ կը լինէր յանկարծ գայիր*
*Էրւած սրտիս ճար բերէիր,*
*Քո Թէլլին եմ, քեզ ասէի,*
*Մարմար, մարմար, կրծքիդ ես փարւէի:*

7 A

Վէլի.— *Հոլէ, ինձ համար մարալ ես*
*Ես, քու աչերից մատաղ,*
*Ես, քու ծամերից մատաղ:*

Թէլլի.— *Ես, քեզ համար մարալ չեմ*
*Ինչ ես ուզում ինձանից,*
*Ինչ ես ուզում ինձանից:*

Վէլի.— *Ի՞նչ կը լինի ինձ եար լինես,*
*Ինձ պէս խեղճին թայ լինես.*
*Ինձ պէս խեղճին թայ լինես:*

Թէլլի.— *Դէ՜, շուտ արա հեռացիր,*
*Ուր որ է աղաս կը գայ.*
*Ուր որ է աղաս կը գայ:*

. . . . . . . . . . . . . .

*Ես կը գնամ միայն նրան ով որ փողեր շատ ունի,*
*Ով որ փողեր շատ ունի, դարդ ու ցաւեր նա չունի:*
*Փող ունե՞ս...*

Վէլի.— Հա՛, հա՛...

Թէլլի.— *Փող ունե՞ս, ես քոնն եմ*
*Փող չունես կորիր գնա...*

Թէլլի.— *Փողը այնպիսի մի բան է,*
*Նրա ույժը շատ մեծ է.*
*Նրա ույժը շատ մեծ է.*
*Դարդ ու ցաւից կ՚ազատէ:*
*Փող ունե՞ս...*

Վէլի.— *Հա՛, հա՛...*

Թէլլի.— *Փող ունե՞ս, ես քոնն եմ*
*Փող չունես կորիր գնա...*

Գիւլչօհրա.— *Ինձ գցեց այս դարդերի մէջ,*
*Արշին մալ ալան...*
*Հալ չի մնաց իմ ջանիս մէջ,*
*Այրւում եմ...*

. . . . . . . . . . . . . .

*Մէկ տեսնելուս պէս սիրեցի,*
*Արշին մալ ալան...*
*Օրեց օր խելագարւեցի*
*Այրւում եմ...*



ՏԻԿ. Ս. ՔՈՒՇՆԱՐԵԱՆ, Գիւլջօհրայի դերին մէջ

Անեա. — *Բաւական է մի լաց լինի*
*Ի՞նչ պատճառով, ո՞ւմ համար,*
*Միթէ հօրից լաւ կը լինի,*
*Արչին մալչին քեզ համար։*

Գիւլչօհրա. — *Ձեռքիս իրաւունքներ չունեմ,*
*Ումի՞ց խնդրեմ օգնութիւն,*
*Հայրս դէպի ինձ անգութ է*
*Այս ինչ անաստուածութիւն։*

Անեա եւ Թէլլի. — *Անիր, խօսիր, ուրախ եղիր,*
*Քեզ չի սազում տխրութիւն,*
*Ինչպէս մենք ենք այնպէս եղիր,*
*Որ ձեռք բերես լաւ անուն։*

## Դ. ԱՐԱՐ

Գիւլչօհրա.— Եարար, ի՞նչ մեղք էի գործել
Որ ընկայ այս տանջանքների մէջ.
Ա՜խ, աղաչում եմ քեզ Տէր իմ Աստուած,
Դու ազատիր, կամ թէ տուր ինձ վերջ։

. . . . . . . . . . . . . . .

Ասկեար.— Արշին մալ ալան,
Արշին մալ ալան,
Արշին մալ ալան,
Բասմայ, թաֆտա, փարչայ, հէյ...

Բոլոբը.— Այս ի՞նչ գեղեցիկ բան եղաւ,
Բոլորիս գործը գլխատուաւ.
Աստուած կեանք տայ մեր Ասկեարին,
Մեր բաղձանքը կատարուեցաւ։

. . . . . . . . . . . . . . .

Սուլթան-Բէկը ուրախացաւ,
Իր ուզածին արժանացաւ.
Տես Հիմա մէջքը չի ցաւի,
Ջանան-ալային արժանացաւ։

Վէլի.— Բա՛, չէք ասի, ես էլ պրծայ
Իմ Թէլլիյին արժանացայ.
Իմ Թէլլիյի ցաւը տանեմ,
Վերջի վերջոյ նրան առա։

. . . . . . . . . . . . . . .

Բոլորը· *Խանումը՝ աղային, Ասեան՝ Սուլէյմանին*
*Խալան՝ Սուլթանին, Թէլէին՝ Նօքեարին,*
*Բոլորս հասանք մեր նպատակին*
*Աստուած էլ կեանք տայ մեզ նայողներին:*

Ութ հոգին արժանացան իրենց նպատակին, եւ *չորս զոյգերը մէկ գիշերում հարսանիք են անում:*

ՎԵՐՋ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220029594

## ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԸ՝ ՍՈՀԱԿ ՐԷՔԸՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

Սոհակ նորաձեւ կարմիր րէքըրտները արդէն իսկ մեծ համբաւ մը …ինած են իրենց՝ ֆոնօկրաֆի րէքըրտներու մարզին մէջ։ Ամէն կողմէ կը …ճանչցուի եւ կը գնահատուի անոնց բարձր յատկութիւնը։

Այսօր, հրապարակի վրայ գտնուած րէքըրտներու լաւագոյններն են Սոհակ նորաձեւ կարմիր րէքըրտները։ Եղանակին բոլոր նրբին երանգները …յստակօրէն կը հնչեն ունկնդրին ականջներուն։ Ամէն գործիք եւ ամէն ձայն կը լսուի աւելի բնականօրէն, աւելի յատկանչօրէն ու աւելի գեղեցկօրէն, …քան որ ցարդ կարելի եղած էր յառաջ բերել ֆոնօկրաֆի րէքըրտ պատրաս- …տելու գործողութեան մէջ, զանոնք հաստատուն ընելու եւ մակերեսի խը- …ժալուր ձայնէն զերծ պահելու տեսակէտէն։

Իր թերթաւոր շինուածքը թոյլ կուտայ մակերեսին համար գործածե- …ծելու այնպիսի նիւթ մը՝ որ բնաջինջ կ'ընէ աւելի ձայնէն յառաջ եկած …խժլտուքը.— թերութիւն մը՝ որմէ անցեալին մէջ զերծ չէին բոլոր ֆո- …նօկրաֆի րէքըրտները։

Սոհակ Րէքըրտ Ընկերութիւնը կը նայի յառաջ, դէպի նոր դարա- …շըրջան մը։ Անիկա իր արտադրութիւններու բարձր յատկու… …հելով եւ իր գործերը ղեկավարելու կոչուած փորձառու… …հաւատք ունենալով է որ գործի կը ձեռնարկէ։

Սոհակ կարմիր րէքըրտները կը գերազանցեն ուրիշ … …քըրտներ։

Սոհակ կարմիր րէքըրտները կարելի է նուագել … …վրայ։

**SOHAG RECORD CO.,**

500 Fifth Ave., New York,

---

**ԳԻՆ 25 ՍԷՆԹ**